26.799

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԶՐՋՓՈՒՌԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻՆ—ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՁԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՑԵՎ ԶԵԿԱՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

336
Ի-11

ԵՐԵՎԱՆ 1985

26799

11.09.2013

336
Ա-11

37295

Հաստատում եմ ԽՍՀՄ-ի
ՖԺԿ-տեղակալ Ռ. ԼԵՎԻՆ
28-հունվարի 1935 թիվ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋՁԻՆԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻՆ— ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I.

1. Հատուկ հրահանգիչը պարտավոր է սիստեմատիկաբար, վոչ պակաս յեռամսյակում մեկ անգամ ստուգելու գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքները։

2. Հատուկ հրահանգիչը, վոչ պակաս յեռամսյակում մեկ անգամ պարտավոր է զեկուցել շրջֆինբաժնի վարիչի միջոցով, շրջգործկոմի նախագահության նիստին իր կողմից կատարած վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքների ստուգման արդյունքների մասին։

3. Հատուկ հրահանգիչը պարտավոր է ապահովել վերստուգիչ հանձնաժողովների հետևյալ աշխատանքները՝

ա) ստուգել վոչ պակաս ամսեկան մեկ անգամ, իսկ առանձին դեպքերում հանկարծակի, ըստ իր հայեցողության, գյուղխորհուրդների կանխիկ դրամական միջոցները և դրամարկղային դիրքը։

բ) վոչ պակաս յեռամսյակում մեկ անգամ կատարել գյուղբյուջեյի լրիվ ստուգում՝

գ) գյուղխորհուրդի նախագահի, քարտուղարի կամ հաշվետարի փոխվելու ժամանակ կատարել գյուղբուջեյի լրիվ ստուգում.

դ) նախորոք լայն կերպով հայտարարել գյուղի աղքատնակչության [illegible] գյուղխորհուրդի սկսվող աշխատանքների ստուգման մասին.

ե) [illegible] յուրացումների կամ գեղծարարու-

ՀՍՍՀ-ՍՍՀ
Ամ. Ա. Մոսկվայի

թյունների մասին, վորոնց համար անհրաժեշտ է այս կամ այն անձնավորությանը յենթարկել քրեական պատասխանատվության անմիջապես (չսպասելով ստուգման վերջանալուն) հայտնել շրջֆինբաժնի հատուկ հրահանգչին, իսկ նրա բացակայության դեպքում շրջ-ֆինբաժնին.

գ) ստուգման արձանագրության մեջ նշել հայտնաբերված խախտումների կարգի մասին, վորը սահմանված է համապատասխան որենքներով և հրահանգներով բյուջեյի կատարման վերաբերյալ.

ե) ստուգման արձանագրությունները կազմել 3 որինակից վորոնցից մեկը պարտավոր են հանձնելու գյուղխորհրդի նախագահին, մյուսը շրջֆինբաժնին, իսկ յերրորդը պահելու յեն վերստուգիչ հանձնաժողովի գործերում.

ը) Իրենց աշխատանքների մասին հաշվետվություն տալ շրջանային Գործադիր կոմիտեյին և գյուղխորհուրդի աշխատանքների ստուգման արդյունքների մասին զեկուցել խորհուրդի պլենումին և ֆինսեկցիային.

4 Գյուղխորհուրդի նախագահի փոխվելու դեպքում հատուկ հրահանգիչը պարտավոր է անձամբ մասնակցել բյուջեյի ստուգմանը, վորը կատարում է վերստուգիչ հանձնաժողովը և հաստատելու յի ստացող-հանձնողական արձանագրությունը:

Գյուղխորհուրդի քարտուղարի կամ հաշվետարի փոխվելու դեպքում ստացող-հանձնողական արձանագրությունը անպայման հաստատվելու յե գյուղխորհուրդի նախագահի կողմից:

II

5. Հատուկ հրահանգիչը պարտավոր է ապահովել, վորպեսզի վերստուգիչ հանձնաժողովները ռեվիզիաների ժամանակ ստուգեն հետևյալը՝

ա) գյուղխորհուրդի դրամարկղում և ընթացիկ հաշիվներով պետբանկում կամ խնայ-դրամարկղում գտնվող կանխիկ միջոցները:

բ) խիստ հաշվառման յենթակա առ յերես գտնվող բլանկները (անդորրագրերը, վորոնք տրվում են գյուղխորհուրդի կողմից մուծողներին բոլոր տեսակի հարկային և վոչ հարկային վճարումներն ընդունելու դիմաց, չեկովի գրքույկները):

գ) առ յերես գտնվող փոխառության պարտատոմսերը:

դ) գյուղ-խորհրդում և գյուղբյուջեյով ֆինանսավորվող հիմնարկներում (դպրոց, հիվանդանոց և այլն) առ յերես գտնվող դույքն ու ինվենտարը և վորքան են համապատասխանում այդպիսիները դույքային գրքի գրանցումներին:

յե) ապառիկների դիմաց վերգրված դույքը:

զ) վորքան ժամանակին և լրիվ են հանձնում պետբանկ կամ խնայ-դրամարկղ գյուղխորհուրդի մուծվող գումարները:

է) գյուղխորհուրդի և գյուղբյուջեյով ֆինանսավորվող հիմնարկների կողմից վորքան կանոնավոր են ծախսվում միջոցները:

ը) վորքան ճիշտ են կատարվում գրքերում և գյուղխորհուրդի հաշվետվություններում յեկամուտների ու ծախսերի գրանցումները:

թ) սահմանված հաշվետվությունները վորոշված ժամկետներին ներկայացվում են վերադաս մարմիններին թե վոչ:

ժ) վորքան կանոնավոր է տարվում կողմնային հաշվետվությունը (հարկատուների անձնական հաշիվները):

ի) վորքան ապահով են պահվում դրամական միջոցները, փոխառության պարտատոմսերը, խիստ հաշվառման յենթակա բլանկները (անդորրագրերը և չեկովի գրքույկները) հաշվային գրքերը ու փաստաթղթերը:

6. Հատուկ հրահանգիչը պարտավոր է ապահովելու, վորպեսզի վերստուգիչ հանձնաժողովը ստուգման անցնելու ժամանակ պահանջի գյուղխորհուրդի նախագահից հետևյալը՝

ա) գյուղխորհուրդի դրամարկղում առ ստուգման որը գտնվող դրամական կանխիկ միջոցները:

բ) Պետբանկի կամ խնայ-դրամարկղի տեղեկանքը գյուղխորհուրդի ընթացիկ հաշիվներում առ ստուգման որը գտնվող միջոցների մնացորդների մասին:

գ) շրջֆինբաժնի տեղեկանքը գյուղխորհուրդին տրված անդորրագրքույկների քանակի մասին և ինչ համարների տակ:

դ) Խնայդրամարկղի տեղեկանքը գյուղխորհուրդին տրված փոխառության պարտատոմսերի քանակի (և ինչ գումարի) նաև անդորրագրքույկների քանակի բաժնեգրվողներից փոխառության դիմաց ստացված գումարների մասին:

յե) Արժեքավոր թղթերը (փոխառության պարտատոմսերը) և խիստ հաշվառման յենթակա բլանկները (անդորրագրերի ու չեկովի գրքույկները).

զ) բոլոր իսկական փաստաթղթերը դրամների ընդունման և ծախսման վերաբերյալ, անդորրագրերի արմատները (ձև № 22) դրամական մուծումների վերաբերյալ կազմված ցուցակները (перечни) (ձև № 23) ռոճկացուցակները (ձև № 31) վճարված թոշակների ցուցակները Սոբեսի գծով (ձև № 34) ավանսային հաշվետվությունները, (ձև № 32) արդարացուցիչ փաստաթղթերի

հետ միասին, ուղեկցող տեղեկագրերը՝ գումարները Պետբանկ փոխադրելու մասին (ձև № 33) և այլ փաստաթղթերը.

ե) ապառքատերերի ցուցակները հարկերի և այլ վճարումների վերաբերյալ (ձև № 24).

զ) ապառքատերերից վերգրված իրերի արձանագրությունները և վաճառված գույքի արձանագրությունները, (ձև № 25).

թ) շրջանային գործադիր կոմիտեյի կողմից հաստատված գյուղրյուջեն.

ժ) գյուղխորհուրդի համար սահմանված հաշվային գրքերը և տեղեկագրերը այն է՝ դրամարկղային գիրքը անդորրագրքույկների հաշվառման տեղեկագրի հետ միասին (ձև № 26 և 28) գյուղրյուջեյի յեկամտային մատյանը (ձև № 27 ա), գյուղրյուջեյի ծախքային մատյանը (ձև № 27 բ), հաշվետու անձանց և զանազան գումարների գիրքը (ձև № 28), պետական հարկերի հաշվառման գիրքը, Պետապի և այլ վճարումների (ձև № 29), ըստ առանձին տնտեսությունների հաշվառման գիրքը այն մասին, թե ինչպես են կատարվում ազգաբնակչության կողմից պարտավորությունները պետության հանդեպ (ձև № 3,-բաժին 8 «Դրամական վճարումներ» (մուծողների անձնական հաշիվները), գույքային մատյանը (ձև № 30).

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.-վերոհիշյալ գրքերի ու մատյանների ձևերը հաստատված են ԿԿՆտ. ժող. ՏՆՏ. Հաշվ. Վարչության կողմից (ЦУНХУ).

III

7. Հատուկ հրահանգիչը պարտավոր է ապահովել, որպեսզի վերստուգիչ հանձնաժողովը գյուղխորհուրդի ֆինանսների ռևիզիայն սկսի դրամարկղում գտնվող դրամական կանխիկ միջոցների ստուգումից, պարզելով նաև միջոցների մնացորդները, որոնք գտնվում են գյուղխորհուրդի ընթացիկ հաշիվներում Պետբանկում, կամ Խնայդրամարկղում, ըստ որում՝

ա) յեթե հայտնաբերվի, որ դրամարկղում պահվում են առանձին անհատների մասնավոր ստացականներ (կանխիկ դրամի փոխարեն), վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է պարզել և արձանագրել թե ում կարդադրությամբ, ինչ նպատակի համար, ում և ինչ գումար է բաց թողնված, նաև ինչու այդ գումարները դուրս չեն գրված.

բ) յեթե հայտնաբերվեն այնպիսի յեկամտային և ծախքային փաստաթղթեր, որոնք գրանցված չեն դրամարկղային գրքում, վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է առաջարկել հաշվետարին անմիջապես գրանցելու բոլոր փաստաթղթերը և դուրս բերել մնացորդները դրամարկղային գրքով.

գ) յեթե գյուղխորհուրդի դրամարկղում պահվում են սահմանված լիմիտից ավելի կանխիկ դրամ ընթացիկ ծախսերը հոգալու համար, կամ այնպիսի դրամներ, որոնք պատկանում են պետական, շրջանային կամ այլ վերադաս բյուջեներին, վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է առաջարկել գյուղխորհուրդին անմիջապես հանձնելու այդ գումարները Խնայ-դրամարկղ կամ Պետբանկ ըստ պատկանելույն.

դ) յեթե գյուղխորհուրդի դրամարկղում հայտնաբերվեն մուտք չարված կանխիկ դրամներ, վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է առաջարկել-անմիջապես մուտք անելու դրամարկղային գրքում.

յե) կանխիկ դրամները հաշվելուց հետո վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է ստուգել դրամարկղային գրքի (ձև № 26) գրանցումները, մուտքի ու յելքի փաստաթղթերի հետ և պարզել արդյոք բոլոր այն գումարները, որոնք մուծված են գյուղխորհուրդի դրամարկղը, գրանցված են դրամ. գրքի մուտքի մասում սյունյակ 4 և 6-ում «Դրամարկղ» և արդյոք համապատասխանում են գյուղհարկի, կուլտ-տուրքի, ինքնահարկի, պետապի և միանվազ տուրքի գումարները, որոնք ցույց են տրված անդորրագրերի արմատներում, ցուցակների (перечни) գրանցումներին, իսկ այդ ցուցակների (перечни) ընդհանուր գումարը դրամգրքի գրանցումներին:

Մյուս տեսակի յեկամուտների նկատմամբ (կրպակների և շենքերի կապալավարձ և այլն) պետք է պարզել որքան են համապատասխանում դրամգրքի գրանցումները այն գումարներին որոնք ցույց են տրված անդորրագրերի համապատասխան արմատներում.

զ) դրամարկղային գրքի ծախքային մասի գրանցումները արդյոք հաստատվում են համապատասխան ծախքային փաստաթղթերով (հաշիվներով ոռճիկացուցակներով, վճարված թոշակների ցուցակներով, ավանտային հաշվետվություններով, անհրաժեշտ արդարացուցիչ փաստաթղթերի հետ միասին, պետբանկի կամ խնայ-դրամարկղի համապատասխան տեղեկագրերով գումարները պետբանկ կամ խնայ-դրամարկղ հանձնելու մասին):

IV

Հատուկ հրահանգիչը պարտավոր է ապահովել, որպեսզի վերստուգիչ հանձնաժողովը դրամարկղային գրքի գրանցումները մուտքի ու ելքի փաստաթղթերի հետ ստուգելիս պարզի հետևյալը՝

ա) Դրամարկղային գիրքը համարակալված և ժապավինված և թե վոչ, և շրջֆինրաժնի վարիչի ստորագրությամբ և կնիքով վավերացված է գրքի վերջում թերթերի քանակը՝

բ) Դրամարկղային գրքից և անդորրագրերի արմատներից չկան արդյոք հանված թերթեր։

գ) Ճիշտ է տարվում արդյոք դրամարկղային գիրքը և կազմվում են դրամական փաստաթղթերը, արդյոք ջնջումներ, չհիմնավորված ուղղումներ և այլ բաներ չկան։

դ) Չկան արդյոք դրամարկղային գրքում չգրանցված ծախքային և եկամտային փաստաթղթեր։

ե) Բոլոր ծախքային փաստաթղթերի վրա կա արդյոք գյուղխորհուրդի նախագահի մակագրությունը վճարման մասին և ստորագրություններ այն անձանց, որոնք ստացել են դրամը։

զ) Ռոճիկացուցակներում առանձնացվում են առանձին սյունյակներ և պահվում են արդյոք օրենքով սահմանված հարկերը և տուրքերը (եկամտահարկ կուլտ-տուրք) աշխատավարձը վճարելիս։

է) Դրամ-արկղային գրքում գրանցվում են առանձին այն դրամական միջոցները, որոնք պատկանում են գյուղբուջեյին (դրամագրքի մուտքի մասի «գյուղբյուջե» սյունյակը և առանձին այն միջոցները, որոնք պատկանում են վերադաս բյուջեներին) դրամգրքի մուտքի մասի սյունյակ «Պետական և այլ գումարներ»։

ը) Եթե դրամգրքի մուտքի ու ելքի մասերում «գյուղբյուջեյի» սյունյակում գրանցված են պետական, կամ վերադաս տեղական բյուջեներին (շրջանային, մարզային) պատկանող և այլ գումարներ, որոնք չեն պատկանում գյուղբյուջեյին, անհրաժեշտ է առաջարկել գյուղխորհուրդին տեղափոխել այդ գումարները «Պետական և այլ գումարների» սյունյակը և հանձնել ըստ պատկանելության։

թ) Եթե դրամգրքի մուտքի ու ելքի մասերում «պետական և այլ գումարների» սյունյակում գրանցված են գյուղբյուջեյին պատկանող գումարներ, անհրաժեշտ է առաջարկել գյուղխորհուրդին տեղափոխել այդ գումարները «գյուղբյուջեյի» սյունյակը և հանձնել ըստ պատկանելության։

9. Դրամարկղային գրքի գրանցումները «դրամարկղ» սյունյակով, փաստաթղթերի հետ ստուգելուց հետո, վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է ստուգել գրանցումները և «ընթացիկ հաշիվ» սյունյակով Պետբանկի կամ Խնայողբամարկղի քաղվածքներով, նպատակ դնելով պարզելու գյուղխորհուրդի ընթացիկ հաշիվների շարժումը այն է՝

ա) արդյոք այն գումարները, որոնք հարկատուների կողմից անմիջականորեն մուծված են ընթացիկ հաշիվները մուտք են արված դրամգրքի «ընթացիկ հաշիվ» սյունյակում.

բ) այն գումարները, որոնք գյուղխորհուրդի չեկերով վճարված են զանազան կազմակերպություններին և անհատներին անմիջականորեն ընթացիկ հաշվից, գրանցված են դրամգրքի ելքի մասում «ընթացիկ հաշիվ» սյունյակում, թե վոչ և այդ գրանցումների դիմաց համապատասխան փաստաթղթեր կան թե վոչ (ռոճիկացուցակներ հաշիվներ և այլն).

գ) այն գումարները, որոնք դուրս են գրված ընթացիկ հաշվից գյուղխորհուրդի դրամարկղը, մուտք են արված դրամգրքով, մուտքի մասի «դրամարկղ» կալոնկայում և ելքի մասի «ընթացիկ հաշիվ» կալոնկայում թե վոչ

դ) այն գումարները, որոնք գյուղխորհուրդի դրամարկղից փոխանցված են ընթացիկ հաշիվը, գրանցված են դրամգրքի ելքի մասի «դրամարկղ» կալոնկայում և մուտքի մասի «ընթացիկ հաշիվ» կալոնկայում։

10 Գյուղխորհուրդի ընթացիկ հաշիվները, որոնք գտնվում են պետբանկում, կամ խնայդրամարկղում, ստուգման ընթացքում անշրաժեշտ է անպայման պարզել, ունի գյուղխորհուրդը ուրիշ ընթացիկ հաշիվներ, բացի սահմանված 3 ընթացիկ հաշվից այն է՝

ա) գյուղբյուջեյին պատկանող գումարների հաշիվ.

բ) ինքնահարկման գումարների հաշիվ.

գ) հաշիվ գյուղխորհուրդի տրամադրության տակ մուծվող զանազան նպատակային գումարների, շրջանային գործադիր կոմիտեի թույլատվությամբ զանազան նպատակային կարիքների համար, որինակ՝ պետական միջոցները հակահրդեհային ձեռնարկումների համար, կամ միջոցներ ճանապարհային շինարարության համար և այլն։

Այս հաշիվներից բացի գյուղխորհուրդին արգելվում է ուրիշ

հաշիվները բանալն, նամանավանդ գյուղխորհուրդի նախագահի կամ քարտուղարի անունով։

11. Անհրաժեշտ է ստուգել դրամգրքի յուրաքանչյուր որվա, ամսվա և ստուգվող ժամանակամիջոցի գրանցումները և հանված ընդհանուր գումարների ճշտությունը, սկսած վերջին որվա ստուգումից։

Վերստուգիչ հանձնաժողովը պետք է ստուգի դրամարկղային գրքով հանված միջոցների մնացորդները «դրամարկղ» կալոնկայով գյուղխորհուրդի կողմից ներկայացված կանխիկ միջոցների հետ, իսկ դրամարկղային գրքով հանված ընթացիկ հաշվի մնացորդները պետք է ստուգի Պետբանկի, կամ Խնայ-դրամարկղի կողմից տրված տեղեկանքների հետ, վորտեղ ցույց են տրված միջոցների մնացորդները։

Դրամարկղում դրամային հավելում կամ պակասորդ հայտնաբերելու դեպքում, վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է պարզելու պատճառները, հավելումների դեպքում պետք է մուտքանի դրամգրքում, իսկ պակասորդի դեպքում պահանջելու յե բացատրություն այն անձնավորությունից, վորը պատասխանատու յե դրամարկղի գումարների համար, միաժամանակ պետք է ձեռք առնի անհրաժեշտ միջոցներ լրացնելու պակասորդը։

12. Վերստուգիչ հանձնաժողովի կողմից ստուգման ընթացքում հայտնաբերված հետևյալ բացերը պետք է արձանագրել, ցույց տալով մեղավոր անձանց այն է՝

ա) դրամգրքում չ՝գրանցված բոլոր մուտքի ու յելքի փաստաթղթերը.

բ) դրամարկղային գրքի սխալները առանձին հաշվառում տանելու վերաբերյալ ցուցակներով «գյուղ-բյուջե» և «պետական ու այլ գումարներ»

գ) դրամգրքում հանված ընդհանուր գումարների սխալները, նաև մուտքի ու յելքի փաստաթղթերի մեջ յեղած սխալները.

դ) դրամարկղային գրքի գրանցումները անդորրագրքույկների արմատների ու ցուցակների (перечни) գրանցումներին չհամապատասխանելու դեպքերը.

յե) այն փաստաթղթերը, վորոնցով վճարված են գումարներ առանց գյուղխորհուրդի նախագահի մակագրության։

Դրամարկղային գրքում և մուծման ցուցակներում (перечни) վերստուգիչ հանձնաժողովի առաջարկությամբ պետք է կատարվին համապատասխան ուղղումներ։

13. Յեթե գյուղխորհուրդի դրամարկղի և ընթացիկ հաշիվ-

ների ստուգման ընթացքում չեն հայտնաբերված սխալներ, այս դեպքում դրամարկղային գրքում վերստուգիչ հանձնաժողովի նախագահի, անդամների ու հատուկ հրահանգչի (յեթե նա մասնակցել է ստուգմանը) ստորագրությամբ կատարվում է հետևյալ մակագրությունը՝ Դրամարկղային գիրքը ստուգված է փաստաթղթերի հետ _____ ամսի _____ ից մինչև _____ ամսի _____ ը, դրամարկղի մնացորդը առ _____ ամսի գումարով _____ ռ. _____ կ. ստուգված է կանխիկ միջոցների հետ, իսկ ընթացիկ հաշվի մնացորդը գումարով _____ ռ. _____ կ. համապատասխանում է պետբանկի կամ խնայդրամարկղի տեղեկանքին։

14. Յեթե դրամարկղային գրքում ստուգման ընթացքում այտնաբերված են սխալներ, կանխիկ միջոցների պակասորդ, կամ հավելում, այս մասին պետք է նշել թե ստուգման արձանագրության մեջ և թե դրամարկղային գրքում։

V

15. Հատուկ հրահանգիչը պարտավոր է ապահովելու վորպեսզի վերստուգիչ հանձնաժողովը հատուկ հետաքրքրությամբ ստուգի հետևյալը՝

ա) խիստ հաշվառման յենթակա բլանկների պահպանման կարգը (անդորրագրերի գրքույկների, չեկովի գրքույկների և այլն), նաև ոգտագործված անդորրագրքույկների արմատների և ինչպես է ապահովված նրանց պահպանումը (փակի տակ են պահվում թե վոչ).

բ) գյուղխորհուրդը տանում է հատուկ հաշվառում ստացված և ոգտագործված անդորրագրքույկների, թե վոչ ըստ № 28 ձևի, վորը կցված է դրամգրքին.

գ) գյուղխորհուրդում առ յերես գանված անդորրագրքույկների քանակը համապատասխանում է շրջֆինբաժնի և խնայդրմարկղի տեղեկանքներում ցույց տրված քանակին թե վոչ, նույպես բոլոր գրքույկները գրանցված են հաշվառման տեղեկագրում թե վոչ.

դ) բոլոր անդորրագրքույկները համարակալված են, թե վոչ և յուրաքանչյուր գրքույկի վերջում յերեսների քանակը վավերացված է շրջֆինբաժնի ստորագրությամբ և կնիքով, թե վոչ, իսկ փոխառության դիմաց ստացված մուծումների գրքույկները վավերացված են գյուղխորհուրդի ստորագրությամբ և կնի-

քով, թե վոչ, արդյոք չկան հանված արմատներ և անդորրագրեր.

յե) անդորրագրերը դրվում են արդյոք պատճեհան թղթի միջոցով թե վոչ և արմատնագրում ցույց տրված գումարները համապատասխանում են մուծողներին տրված անդորրագրերի գումարներին թե վոչ։

Այսպիսի ստուգում վերստուգիչ հանձնաժողովի միջոցով կատարվում է բաղդատելով իր հայեցողությամբ, կամ հատուկ հրահանգչի ցուցմունքով վորոշ քանակությամբ արմատները տրված անդորրագրերի հետ, այս ձևվի ստուգումը անց է կացվում տեղերում ըստ թաղամասերի և տնտեսություններին, մասնակի կերպով։

Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել, թե ինչպես են ձևակերպվում անդորրագրերը։ Բացվում են բոլոր այունյակները թե վոչ, անդորրագրերում կան արդյոք ստորագրություններ այն անձանց, վորոնք ստացել են դրամները և գյուղխորհուրդի կնիքը։

Յեթե կհայտնաբերվի, վոր առանց որինական անդորրագրեր տալու ստացված են դրամներ, վերստուգիչ հանձնաժողովը պետք է ստուգի, թե ինչպես են դրանցված այդ գումարները գյուղխորհուրդի դրամագրքում։

VI

16. Հատուկ հրահանգիչը պարտավոր է ապահովել, վորպեսզի վերստուգիչ հանձնաժողովը փոխառության պարտատոմսերի հաշիվները ստուգի խնայողական դրամարկղի տեղեկանքի հիման վրա, պարտատոմսերի մուտքի և ելքի տեղեկագրի և փոխառության տարածման լիազորների անձնական հաշիվների հիման վրա, վորի ընթացքում անհրաժեշտ է պարզել հետևյալը՝

ա) գյուղխորհուրդի կողմից ինչքան փոխառության պարտատոմս է ստացված, ինչպիսի և ինչ գումարի.

բ) ինչքան բաժանված է բաժնեգրվողներին, վորոնք արժեքը լրիվ մուծել են.

գ) չկան արդյոք չբաժանված պարտատոմսեր այն բաժնեգրվողներին, վորոնք արժեքը լրիվ վճարել են.

դ) գյուղխորհուրդում և փոխառության տարածման լիազորների մոտ առ յերես գտնվող պարտատոմսերը համապատասխանում են պարտատոմսերի մուտքի ու ելքի տեղեկագրի գրանցումներին և լիազորների անձնական հաշիվների գրանցումներին։

յե) փոխառության տարածման լիազորները ժամանակին մուծում են Գյուղխորհուրդ հավաքած գումարները թե վոչ, իսկ գյուղխորհուրդը իր հերթին փոխառության գումարները ժամանակին մուծում է Խնայողական դրամարկղը, թե վոչ.

զ) փոխառության մուծումներն ըստ անդորրագրքույկների արմատների մուտք են տրված «Պետական յեկամուտների» ձև № 24 գրքում թե վոչ, իսկ դրամարկղային գրքում «պետական և այլ գումարներ» այունյակում մուտքը և ելքը ցույց է տրված թե վոչ։

17. Հատուկ հրահանգիչը պարտավոր է ապահովել, վորպեսզի վերստուգիչ հանձնաժողովը ստուգի պետական հարկերի, Պետապի և այլ մուծումների գումարները ու համեմատելով գրքերի (դրամարկղային յեկամուտների, ծախսերի և այլ գումարների) գրանցումները փաստաթղթերի հետ պարզի հետևյալը՝

ա) պետական հարկերի, «պետապի և այլ գումարների» ձև № 29 գրքում, բացված է թե վոչ առանձին հաշիվներ փոխառության, կուլտուրքի, յեկամտահարկի, Պետապի, միանվագ տուրքի և այլն.

բ) դրամարկղային գրքի, «պետական և այլ գումարների» այունյակի գրանցումները փոխադրված են «պետական հարկերի, պետապի և այլ մուծումների» գրքի համապատասխան հաշիվները թե վոչ.

գ) ձև № 29 գրքում հանված ընդհանուր գումարների ճշտությունը, ըստ առանձին պետական հարկերի և այլ մուծումների տեսակների.

դ) գյուղխորհուրդի դրամարկղն ընդամենը ինչքան գումար է մուծված, ըստ մուծումների առանձին տեսակների՝ պետական և այլ մուծումների (յեկամտային հարկ, կոպարային ապահովագրություն, փոխառություն և այլն). այդ գումարները լրիվ հանձնված են Պետբանկ, կամ Խնայողական դրամարկղ ըստ պատկանելության և հաստատվում են համապատասխան փաստաթղթերով թե վոչ (ուղեկցող տեղեկագրեր ձև № 33)։ Պետբանկի կամ Խնայողական դրամարկղի նշանակումները կան դրամները ընդունելու մասին, թե վոչ։

յե) գյուղխորհուրդի կողմից ճիշտ է կատարվում մասնահանումը գյուղհարկից գյուղ-բյուջեյի ոգտին.

զ) գյուղխորհուրդը արդյոք չի ծախսել իր կարիքների

համար այն միջոցները, որոնք պատկանում են վերադաս տեղական և պետական (Հանրապետական և Միութենական) բյուջեներին, կամ այլ կազմակերպություններին։

Նման փաստեր հայտնաբերելու դեպքում Վերստուգիչ հանձնաժողովը պարզում է, ինչպիսի միջոցներ և ինչ գումարի յե ծախսված, ձեռք է առնում համապատասխան միջոցներ վերականգնելու և փոխանցելու Պետական կամ Ինայողական դրամարկղ, միաժամանակ յենթարկելով մեղավորներին պատասխանատվության։

18. Հատուկ հրահանգիչը պարտավոր է ապահովել, որպեսզի Վերստուգիչ Հանձնաժողովը կոպարային հաշվետվության գծով ստուգի հետևյալը՝

ա) յուրաքանչյուր հարկատուի համար անձնական հաշիվ տարվում է թե վոչ,—բաժին 8 «Դրամական վճարումներ» ըստ առանձին տնտեսությունների—գրքում տարվում է հաշվառում այն մասին, թե ինչպես են կատարվում ազգաբնակչության կողմից պարտավորությունները պետության առաջ (ձև № 3).

բ) հարկատուների անձնական հաշիվներում գրանցումները ժամանակին կատարվում են թե վոչ, և ստուգված են այդ գրքանցումները անդորագրքույկների արմատների հետ.

գ) գյուղխորհուրդի կողմից ժամանակին կազմվում են ապառքացուցակներ (ձև № 24) ապառիկները գանձելու համար.

դ) ապառիկների գումարը առ ստուգման որը և կուտակման պահանները.

յե) գյուղխորհուրդի կողմից ապառիկներից գանձվում և որենքով սահմանված տույժը, թե վոչ։

VII

19 Հատուկ հրահանգիչը պարտավոր է ապահովելու, որպեսզի վերստուգիչ հանձնաժողովը սիստեմատիկաբար ստուգի գյուղբյուջեյի կատարողականը։

Գյուղբյուջեյի կատարողականի ստուգման ընթացքում անհրաժեշտ է համեմատության մեջ դնել դրամ. գրքի մուտքի և յելքի գրանցումները սյունյակով «գյուղբյուջե» յեկամուտների (ձև № 27 ա) ու ծախսերի (ձև № 27 բ) մատյանների գրանցումների հետ, ընդ վորում վերստուգիչ հանձնաժողովը պետք է պարզի հետևյալ խնդիրները՝

ա) բոլոր այն յեկամուտները ու ծախսերը, վորոնք գրանցված են դրամգրքում «գյուղ-բյուջե» սյունյակով նույնպես գրանցված են գյուղբյուջեյի յեկամուտների ու ծախսերի մատյաններում, թե վոչ։

բ) գյուղբյուջեյի յեկամուտների ու ծախսերի մատյաններում հանված ընդհանուր գումարները համապատասխանում են դրամգրքի ընդհանուր գումարներին սյունյակով «գյուղբյուջե» և վորքան ճիշտ են հաշված այդ գումարները, ըստ առանձին ամիսների ու տարվա սկզբից։

20. Գյուղբյուջեյի կատարողականը ստուգելու ընթացքում վերստուգիչ հանձնաժողովը պետք է հատուկ ուշադրություն դարձնի, թե գյուղխորհուրդի կողմից ինչպես են պաշտպանվում բյուջետային կարգապահության վերաբերյալ սահմանված կանոնները, ժամանակին են կատարվում յեկամտային աղբյուրները և վորքան ճիշտ են ծախսվում միջոցները, ընդ վորում պետք է պարզել հետևյալը՝

ա) գյուղխորհուրդը ինչպիսի միջոցներ է ձեռնարկում ժամանակին և լրիվ չափով կատարելու այն յեկամուտները, վորոնք նախատեսված են գյուղբյուջեյով.

բ) չի խախտվում արդյոք միութենական Կ. Գ. Կ.-ի և ԺԿՄ-ի 33-թ.17-հուլիսի վորոշումը այն մասին, վոր գյուղխորհուրդներին արգելվում է առանց պետական կատարել մասհանումներ, բոլոր պետական յեկամուտներից, բացի գյուղհարկից.

գ) յեթե գյուղբյուջեյով կատարված փաստացի ծախսերը նույն ժամանակամիջոցում մուտք յեղած յեկամուտներից ավելի յեն, անհրաժեշտ է ստուգել ինչ միջոցներից է ծածկված յեկամուտների ու ծախսերի մեջ գոյացած ճեղքվածքը և արդյոք գյուղխորհուրդների կարիքների համար չեն ծախսված իրեն չպատկանող միջոցները (շրջանային, պետական բյուջեների և այլն).

դ) բյուջեյով նախատեսված գումարներից ավելի ծախսեր կատարված են թե վոչ, ըստ առանձին հիմնարկների (գյուղխորհուրդ, դպրոց, հիվանդանոց և այլն) և առանձին հոդվածների (աշխատավարձ, վարչտնտեսական և այլն).

յե) գյուղբյուջեյի միջոցները արդյոք չեն ծախսվում այնպիսի կարիքների վրա, վորոնք չեն նախատեսված բյուջեյով.

զ) սահմանված ժամկետներին վճարվում է աշխատավարձը թե վոչ, չկա արդյոք աշխատավարձի պարտք ժողովրդավորության, առողջապահության և այլ աշխատակիցների.

ե) շինարարության համար կան կազմված նախահաշիվներ, ծրագրեր և հատակագիծ։ Շինանյութերի, արհեստագործի, բանվորական ուժի համար սահմանված դները պաշտպանվում են թե վոչ.

ը) արդյոք չեն կատարվում ծախսեր արտապլանային շինարարության վրա, վորը չի նախատեսված բյուջեյով և չի եղ թույլատրված շրջանային գործադիր կոմիտեյի կողմից։

21. Գյուղխորհուրդի և առանձին հիմնարկների նկատմամբ (դպրոց, հիվանդանոց և այլն) վորոնք ֆինանսավորվում են գյուղբյուջեյով, վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է ստուգելու հետևյալը՝

ա) ծախսերի նախահաշիվները, վորոնք հաստատված են գյուղխորհուրդի կողմից.

բ) այդ նախահաշիվները կազմելու և կատարելու ընթացքում պաշտպանվում և արդյոք խիստ խնայողության միջոցները ծախսելու գործում.

գ) չ՝կան արդյոք աշխատավարձի դրույքների անորինական բարձրացում, չեն պահվում արդյոք արտահատիքային միավորներ.

դ) աշխատավարձի և վարչատնտեսական հոդվածներով չկան արդյոք գերածախսեր, վոչ նպատակային (անտնտեսավարական) ծախսեր.

յե) այն միջոցները, վորոնք նախատեսված են նախահաշվով, ոգտագործվում են իր նպատակին, թե վոչ. որինակ՝ դպրոցների ուսումնական պիտույքների ծախսերը, նյութական ապահովման—մանկատների և հիվանդանոցների սննդի, սպիտակեղենի, հագուստեղենի, ղեղրայքի և արդյոք այդ միջոցները չեն ոգտագործվում աշխատավարձի և վարչատնտեսական հոդվածների գերածախսերը ծածկելու համար.

զ) այն հիմնարկ-ձեռնարկները, վորոնք ֆինանսավորում են գյուղբյուջեյով ունեն արդյոք ուրիշ յեկամուտներ, ինչ աղբյուրներից են գոյացել այդ միջոցները, ինչ գումարի, ինչ նպատակի համար են հատկացվում և փաստորեն ինչի վրա յեն ծախսվում։ Գյուղխորհուրդը հաստատել և արդյոք այդ հատուկ միջոցների, ծախսերի ու յեկամուտների նախահաշիվը և ինչպես և կատարված այդ նախահաշիվը։

VIII

22. Հաշվետու անձանց դանազան գումարների և հաշիվների վերաբերյալ, վերստուգիչ հանձնաժողովը պետք է ստուգի գը-

բանցումների ճշտությունն ըստ դրքերի՝ հաշվետու անձանց, դանազան գումարների ու հաշիվների (ձև № 28) և պարզի հետևյալը՝

Ա. Հաշվետու անձանց վերաբերյալ.

ա) սահմանված գումարներից ավելի արդյոք չեն տրվում ավանսներ.

բ) բոլոր հաշվետու անձանց կողմից, վորոնք ստացել են առհաշիվ գումարներ, իր ժամանակին ներկայացված են ավանսային հաշվետվություններ թե վոչ, նաև չծախսված գումարների մնացորդները, հանձնված են գյուղխորհրդի դրամարկղը թե վոչ։

Հաշվետու անձանց կողմից, վորոնք ստացել են առհաշիվ գումարներ կազմակերպչական և վարչատնտեսական ծախսերի համար, հաշվետվությունները պետք է ներկայացվեն 15 որվա ընթացքում ավանսը ստանալու որից, իսկ գործուղղումների համար ստացված գումարների վերաբերյալ 3 որվա ընթացքում գործուղղումից վերադառնալու որվանից.

գ) մինչև առհաշիվ անձանց, մինչև նպատակի համար արդյոք կոկնակի ավանս բաց չի թողնվում, չ՝փակելով նախորդ ավանսի հաշիվը

դ) գյուղխորհուրդը ժամանակին կատարում է նշանակումներ անձնական հաշիվներում հաշվետվությունները ներկայացնելու ու մնացորդները հանձնելու մասին և այդ հաշվետվությունները արդյոք հաստատվում են գյուղխորհրդի նախագահի կողմից թե վոչ

յե) ներկայացված և հաստատված հաշվետվությունների ճշտությունը.

զ) հաշվետվություններում ցույց տրված ծախսերը վորքան ճիշտ են կատարված և համապատասխան փաստաթղթերով արդարացված են թե վոչ (որինական հաշիվներ, ստացականներ)։

Բ. Գյուղխորհուրդների կողմից ստացված փոխառությունների վերաբերյալ.

ա) Գյուղխորհրդի կողմից վորտեղից է ստացված յերկարատև կամ կարճատև փոխառություններ, ինչ պայմաններով և ինչ նպատակի համար։

Այդ փոխառությունները ձևակերպված են պայմանագրե-

րով թե վոչ, և արդյոք նախատեսված են գյուղխորհրդի բյուջեյով.

բ) № 28 գրքում մուտք արված և մարված փոխառությունների գրանցումները համապատասխանում են դրամագրքի և գյուղբյուջեյի յեկամուտների ու ծախսերի մասյաններին գրանցումներին թե վոչ, փոխառությունների պարքի մնացորդը առ ստուգման որը.

գ) ստացված փոխառությունները ծախսվում են իր նպատակին թե վոչ, ժամանակին (ըստ նշանակված ժամկետների) մարվում են այդպիսիք, չկան այնպիսի դեպքեր, վոր վճարված լինեն ուշ ժամանակին չմարելու համար: Ինչքան վճարված և ուշ, փոխառությունները ժամանակին չմարելու պատճառները:

Գ. Գյուղխորհուրդի զանազան պարտապանների վերաբերյալ ըստ պայմանագրերի ու պարտավորությունների.

ա) Ով, վորքան և ինչի համար պարտք և գյուղխորհրդին. ձևակերպված են այդ պարտքերը համապատասխան պայմանագրերով (շենքերի կապալված, հողամասերի կապալավարձ, քարհանքների և այլն) և ձև № 28 գրքում տարվում են արդյոք առանձին հաշիվներ, յուրաքանչյուր պարտապանի համար.

բ) մուծումներն ըստ պայմանագրերի ժամանակին կատարվում են թե վոչ:

Յեթե առանձին պարտապանները ժամանակին չեն մուծում իրենց ունեցած պարտքը գյուղխորհրդին, վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր և պարզելու մեղավոր անձանց, վորոնք ժամանակին չեն գանձում պարտքերը, միաժամանակ պետք և առաջարկի գյուղխորհրդին անմիջապես գանձելու պարտքերը.

գ) դրամագրքի մուտքի մասում «դրամարկղ» և «ընթացիկ հաշիվ» սյունյակներով գրանցված մուծումներն ըստ պայմանագրերի ու պարտավորությունների նույնպես գրանցված են ձև № 28 գրքի անձնական հաշիվներում ու գյուղբյուջեյի յեկամտային մասյանում թե վոչ.

դ) գյուղխորհուրդի կողմից կան արդյոք փոխարինաբար բաց թողնված գումարներ գյուղի զանազան կազմակերպություններին (գյուղկոոպին, կոլտնտեսության վարչության և այլն) կամ գյուղխորհրդի աշխատակիցներին ու վորևե մասնավոր, անձանց:

Նման փաստեր հայտնաբերելուց, վերստուգիչ հանձնաժողովը պետք և մտցնի արձանագրության մեջ, թե ում ե բաց թողնված, ինչ գումարի, ինչ միջոցներից և ում կարգադրությամբ, միաժամանակ պետք և առաջարկի գյուղխորհուրդին անմիջապես գանձել այդ պարտքերը և պատասխանատվության կանչի այն անձնավորություններին, վորոնք կարգադրել են փոխարինաբար գումարներ բաց թողնելու:

Դ. Զանազան գումարների վերաբերյալ, վորոնք մուծված են գյուղխորհրդի տրամադրության տակ յեվ զանազան հաշիվների.

ա) Այն գումարները, վորոնք շրջանային գործադիր կոմիտեյի կողմից մուծված են գյուղխորհուրդ (նրա ընթացիկ հաշվին կամ դրամարկղ) հատուկ նպատակների համար (այնպիսի միջոցառումների, վորոնք բյուջեյով չեն նախատեսված) գրանցված են դրամագրքում և զանազան գումարների (ձև № 28) գրքում թե վոչ.

բ) յուրաքանչյուր հիմնարկության և ձեռնարկության վերաբերյալ տարվում են առանձին հաշիվներ թե վոչ.

գ) գյուղխորհուրդի կողմից այդ գումարները ճիշտ են ոգտագործվում նշանակված նպատակների համար թե վոչ:

դ) այդ գումարների հաշվին կատարված ծախսերը համապատասխան փաստաթղթերով արդարացված են թե վոչ:

IX

23. Հատուկ հրահանգիչը պարտավոր և ապահովելու, վորպեսզի վերստուգիչ հանձնաժողովը ստուգի գյուղխորհուրդի և գյուղական բյուջեյով ֆինանսավորվող հիմնարկների գույքը և ինվենտարը տարեկան մեկ անգամից վոչ պակաս: Նույնպիսի գույքի ստուգում պարտավոր և կատարել գյուղխորհուրդի, դպրոցի, հիվանդանոցի վարիչների փոփոխման դեպքերում, ըստ վորում նա պետք և պարզի հետևյալը՝

ա) այն գույքն ու ինվենտարը, վորը պատկանում և գյուղխորհուրդին և գյուղբյուջեյով ֆինանսավորվող հիմնարկներին (դպրոց, հիվանդանոց, մանկատուն և այլն) ճիշտ, և լրիվ հաշվի առնված և գույքային (ձև № 30) մատյանում թե վոչ.

բ) առ յերես գտնվող գույքը և ինվենտարը վորքան են համապատասխանում գույքային մատյանի գրանցումներին.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
3976
372,15

գ) գյուղխորհուրդին կամ նրա յենթակա հիմնարկներին պատկանող գույքից չկա այնպիսի գույք, որը պտղում է առանձին անհատների անձնական կարիքների օգտագործման տակ.

դ) գույքի և ինվենտարի գնահատումը որքան ճիշտ է կատարված: Նոր կառուցված շենքերը, նոր ձեռք բերված ինվենտարը և կահավորումը գույքային մատյանում գրանցվում է ըստ փաստացի արժեքի-հաշիվների, կամ նախահաշիվների կատարողականի հիման վրա, մնացած գույքը գրանցվում է ըստ գյուղխորհուրդի կողմից նշանակված հանձնաժողովի գնահատումների (հողամասերը, անտառները և քարհանքերը գնահատման յենթակա չեն).

յե) գույքային մատյանում (ձեվ № 30) կատարվում են նշանակումներ այն մասին, որ անպետքացած գույքը դուրս է գրված և այս մասին կազմվում են համապատասխան արձանագրություններ, թե որչ:

24. Ապառքատերերից բռնագրավված գույքի վերաբերյալ պետք է ստուգել և պարզել հետևյալը՝

ա) գյուղխորհրդում առ յերկս գտնվող բռնագրավված գույքը ինչպես է պահվում և հաշվի առնվում, չկան արդյոք վատնման, յուրացման և հափշտակման դեպքեր, կամ առանձին անհատների անձնական կարիքների օգտագործման տակ.

բ) կազմվում են արդյոք վերցված ու վաճառված գույքի վերաբերյալ արձանագրություններ (ձեվ № 25)

գ) վերցրված գույքի ճիշտ գնահատումը. Չկան այնպիսի դեպքեր, որ գույքը գնահատված լինի ցածր գներով

դ) գյուղխորհուրդի կողմից ինչպես են պաշտպանվում վերցված գույքի վաճառման կանոնները. այլոլիսի գույքը յենթակա յե վաճառման աճուրդով, կամ հանձնվում է ըստ պայմանագրերի կոոպերատիվին և այլ տնտեսական կազմակերպություններին.

յե) արդյոք չեն մասնակցում աճուրդին վերցրված գույքից որևե բան ձեռք բերելու նպատակով գյուղխորհուրդի պաշտոնական անձինք (նախագահը, քարտուղարը, հաշվետարը և խորհրդի անդամները): Ըստ որենքի, այդ անձանց մասնակցությունը աճուրդին արգելվում է:

25. Հատուկ հրահանգիչը պարտավոր է ցուցմունքներ տալու, որպեսզի վերստուգիչ հանձնաժողովը ստուգման ընթացքում պարզի հետևյալը.

ա) Ինչպես են կատարված նախորդ ստուգման առաջադրանքները. վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է ծանոթանալու նախորդ ստուգման արձանագրության հետ և ստուգելու, թե ինչպես են կիրառված կյանքում գյուղխորհրդի կողմից արձանագրության մեջ ցույց տված առաջադրանքները: Յեթե այդ առաջադրանքները չեն կատարված, այս դեպքում նշվում է արձանագրության մեջ, ցույց տալով չկատարման պաճառները և կոնկրետ այն անձանց, որոնց վրա դրված եր պարտականություն կատարելու այդ առաջադրանքները:

Յեթե նախորդ ստուգման առաջադրանքները չեն կատարված գյուղխորհուրդի աշխատակիցների մեղավորությամբ, վերստուգիչ հանձնաժողովը այս մասին հարց և հարուցում գյուղխորհուրդի և շրջանային գործադիր կոմիտեյի առաջ, մեղավորներին տույժի յենթարկելու:

բ) Ստուգման արդյունքների մասին, վերստուգիչ հանձնաժողովն անպայման կազմելու յե արձանագրություն ըստ սրան կցված ձեվի: Արձանագրության մեջ պետք է ցույց տրվեն հայտնաբերված բոլոր բացերն ու թերությունները:

Արձանագրության վերջում վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է ձեվակերպելու կոնկրետ առաջադրանքներ գյուղխորհուրդի նախագահին, քարտուղարին, հաշվետարին և այլ պաշտոնական անձանց, վերացնելու ստուգման ընթացքում հայտնաբերված բացերը:

Միաժամանակ նշվելու յե ժամկետը, որի ընթացքում այդ բացերը պետք է վերացվեն: Յեթե որևե հարցում վերստուգիչ հանձնաժողովը դժվարանում է հանել յեզրակացություն և կազմել առաջադրանքներ, այս դեպքում անհրաժեշտ է հարցում անել շրջֆինբաժնին (հատուկ հրահանգչին):

ԽՍՀՄ-ի Ֆինժողկոմատի Ֆինքյուջետային
Տեսչության դեկավար՝ ԽԱՐԻՆՍԿԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«_____» 1935 թ.

_____ շրջան, գյուղ _____

Գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովը մասնակցությամբ ընկ. ընկ.

_____

_____ ներկայությամբ գյուղխորհրդի նախագահ՝ ընկ. _____

քարտուղար՝ ընկ. _____ և հաշվետար՝ ընկ

_____ ստուգման յենթարկելով գյուղխորհրդի դրամական հաշիվների և դյուրքերի դրությունը, ընթացիկ հաշիվների, փոխառության պարտատոմսերի, խիստ հաշվառման յենթակա բլանկների (անդորրագրային գրքույկներ) գյուղխորհրդի բյուջեյի կատարումը և կոպարային հաշվետվությունը սկսած ս. թ. _____ -ից (ցույց տալ ժամանակամիջոցը) ընդ վորում պարզվեց հետևյալը.

I. Դրամարկղ յեվ ընթացիկ հաշիվներ

Փաստորեն գյուղխորհրդի դրամարկղում առ ստուգման օրը « » . . . . . 1935 թ. կանխիկ դրամ գտնվեց . . . . . ռ. . . . կ. կանխիկ դրամի փոխարեն գյուղխորհրդի դրամարկղում հայտնաբերված են մասնավոր ստացականներ (ցույց տալ ինչպիսի և ինչ գումարի).

Դրամարկղային գրքի ստուգման ընթացքում հայտնաբերված են մուտք չարված հետևյալ գանձումները _____

_____

և յելք չարված հետևյալ ծախսերը _____

_____

լրացուցիչ գանձումներից և ուղղումներից հետո (անհրաժեշտության դեպքում) դրամարկղային գրքում, դրամարկղի և ընթացիկ հաշիվների շրջանառությունը ու դրամական միջոցների մնացորդների պատկերը հետևյալն է.

	Գյուղբյուջե		Պետական և այլ գումարներ	
	դրամարկղ	ընթ. հաշիվ	դրամարկղ	ընթ. հաշիվ
1. Մնացորդ առ նախորդ ստուգման օրը				
2. Մուտք և յելք ստուգման ժամանակամիջոցում				
3. Ծախք (պետական և այլ գումարների հանձնումը Գ. բանկ) ստուգման ժամանակամիջոցում . . .				
4. Մնացորդ առ ստուգման օրը . . .				
5. Հավելում սահմանվ. լիմիտից դուրս				

Դրամարկղային գրքի գրանցումների հիման վրա գյուղխորհրդի դրամարկղում պակաս է . . . . . Ռ. . . . Կ., կամ ավելանում է . . . . . Ռ. . . . Կ. (ցույց տալ մանրամասն պատճառները).

Գյուղխորհրդի ընթացիկ հաշվի մնացորդը, վորը ցույց է տրված դրամագրքով . . . . . Ռ. . . . Կ. հաստատվում է Գեսբանկի կամ Ենայողական դրամարկղի տեղեկանքով (ամիս և թիվ).

Դրամգրքի և փաստաթղթերի ստուգման ընթացքում հայտնաբերված են հետևյալ պակասորդները (մանրամասն ցույց տալ). Ցուցացումներ կամ դեղծարարություններ հայտնաբերելու դեպքում մատնանշել գումարը և կոնկրետ մեղավորներին.

II. Փոխառության պարտատոմսեր

Պարտատոմսերի մնացորդը գյուղխորհրդում

» » փոխառության գումարով . . . . . ռ. . . . կ.

» » փոխառության գումարով . . . . . ռ. . . . կ.

Պարտատոմսերի մնացորդը լեզվորների մոտ . . . — . ռ. . . . կ.

» » փոխառության . . . . . ռ. . . . կ.

» » » . . . . . ռ. . . . կ.

վորը համապատասխանում է տարատատոմսերի մուտքի ու յելքի հաշվառման տեղեկագրի գրանցումներին.

(Մնացած հարցերը լուսաբանել հրահանգի կետ 16-ի հիման վրա).

III. Խիստ հաշվառման յենթակա բլանկներ

Անդորրագրքույկների քանակը, վորոնք ստացված են գյուղխորհրդի կողմից համապատասխանում են հաշվառման տեղեկագրի գրանցումներին և շրջինբաժինների տեղեկանքին.

(Չհամապատասխանելու դեպքում ցույց տալ տարբերությունը). Համարների հետևողականությունը արմատներում տրված անդորրագրերի պահպանված և (կամ վոչ). Հանված անդորրագրերի արմատներ չկան (կամ յեթե կան այդպիսիները, ցույց տալ №№-ը.

Ոգտագործված անդորրագրերի արմատներ կան . . հատ, վորը համապատասխանում է անդորրագրքույկների հաշվառման տեղեկագրի գրանցումներին.

Գանձված է ըստ տրված անդորրագրերի . . ռ. կ., վորը համապատասխանում է դրամարկղի տվյալներին և կոպարային հաշվետվության—դրամների մուծման վերաբերյալ.

Պահեստում կան « » հատ անդորրագրքույկներ № . . . -ից մինչև № -ը.

Անդորրագրքույկները գտնվում են փակի տակ (կամ վոչ).

IV. Գյուղխորհրդի բյուջեյի կատարողականը

Գյուղբյուջեյի յեկամտային մասի կատարողականը (ցույց տալ ժամանակամիջոցը)։

Հատվածն §§ և հոդվածների №№-ը	Յեկամուտների անվանումը	Հաստատված և բյուջետ. տարվա համար	Կատարված և ստուգման ժամանակամիջոց.

(Այս ձևով ամբողջ բյուջեյով ցույց տալ յեկամուտները և հանել ընդհանուր գումարը)։

Գյուղբյուջեյի ծախքային մասի կատարողականը

Հատվածն §§ և հոդվածների №№-ը	Ծախքերի անվանումը	Հաստատված և բյուջետ. տարվա համար	Կատարված և ստուգման ժամանակամիջոց.

(Այս ձևով ամբողջ բյուջեյով ցույց տալ ծախքերը և հանել ընդհանուր գումարը)։

Գյուղբյուջեյի յեկամուտների ու ծախսերի կատարողականի լուսաբանումը տալ ըստ հրահանգի կետ 20-21. և անպայմանորեն մատնանշել վերստուգիչ հանձնաժողովի կողմից հայտնաբերված բյուջետային կարգապահության խախտումները։

V. Պետական հարկեր, Պետ. ապահովագրություն յեվ այլ վճարումներ

Պետական հարկերի պետապահովագրության և այլ վճարումների գումարների շարժումն ըստ գրքի (ձև № 29)։

Վճարումների անունը	Մնացք և յեղել գյուղխորհուրդ ստուգման ժամանակամ. ջոցում	Հանձնված և Պետբանկ ըստ պատկանելության ստուգման ժամանակամիջոց.		
		Ընդամենը	Ավել	Պակաս

Թվել բոլոր վճարումները, որոնք յենթակա յեն փոխանցման պետական, շրջանային կամ վերադաս բյուջեների ոգին։

Հետագա լուսաբանումը կատարել ըստ հրահանգի կետ 17-ի։

VI.

Հաշվետու տնձինք, զանազան գումարներ յեվ հաշիվներ

Հաշվետու տնձանց, զանազան գումարների և հաշիվների գիրքը (ձև № 28) տարվում է սահմանված ձևով, ըստ գրքում կատարած գրանցումների (ցույց տալ ամիս և թիվ)։ Ընդհանուր պարտքը գյուղխորհուրդին կազմում է ռ. . կ. (այս բաժնի լուսաբանումը կատարել ըստ հրահանգի կետ 22-ի)։

VII. Գույքի պահպանում յեվ հաշվեառում

Առ յերես գտնվող գույքը համապատասխանում է գույքային մատյանի գրանցումներին կամ չի համապատասխանում՝ հայտնաբերված է, որ գույքի մի մասը (ցույց տալ ինչպիսի և ինչ գումարի) մուտք չի տրված, հայտնաբերված է, որ պակասում է գույքից (ինչպիսի և արժեքը)։ Այս բաժնի լուսաբանումը կատարել ըստ հրահանգի կ. կ. 23 և 24-ի),

VIII. Կոպարային հաշվետվության դրությունը

Արձանագրության մեջ պետք է լուսաբանել այն հարցերը, որոնք նշված են հրահանգի № 18 կետում այն է՝ անձնական հաշիվներում, գրանցումներ մուծումների մասին ժամանակին կատարված են թե վոչ, որ ժամանակաընթացքում չի կատարված։ Ապարիկների գանձման համար հսկողություն տարվում է թե վոչ, տպագրացուցակները ժամանակին կազմվում են և միջոցներ ձեռք առնվում են գանձելու ապարիկները թե ոչ։

IX. Վերստուգիչ հանձնաժողովի առաջադրանքները նախորդ ստուգման վերաբերյալ կատարված են թե վոչ, յեթե չեն կատարված, որ մասում և կոնկրետ—գյուղխորհրդի որ աշխատակիցը չի կատարել։

X. Վերստուգիչ հանձնաժողովի առաջադրանքները տվյալ ստուգման վերաբերյալ

Վերստուգիչ հանձնաժողովի ստորագրությունները և այն անձանց, որոնք մասնակցել են ստուգմանը։

Գյուղխորհրդի նախագահի, քարտուղարի և հաշվետարի փոխվելու դեպքում կազմված արձանագրություններում ավելացվում է հետևյալ մակագրությունը։

Ստույգ արձանագրության տվյալների հիման վրա դրամների կանխիկ մնացորդը, արժեքավոր նյութերը, գրքերը, փաստաթղթերը և գործերը

« » . . . . . 193 թ.

ՀԱՆՁՆԵՑԻ ԸՆԴՈՒՆԵՑԻ

Գյուղխորհրդի նախագահի փոխվելու դեպքում (շրջանային հասուկ հրահանգչի ստորագրությամբ), իսկ քարտուղարի կամ հաշվետարի փոխվելու դեպքում (գյուղխորհրդի նախագահի ստորագրությամբ), արձանագրության վերջում (համապատասխան ստորագրություններից հետո—ընդունման և հանձնման մասին) կատարվում է հետևյալ մակագրությունը՝

«Տվյալ արձանագրությունը հաստատում եմ « » . . . . . թիվ,
պաշտոն և ազգանուն

ՀՍՍՀ Գլխ. Գրադարան
ՀՄԽՀ-

ՍՈՅՈՒԶՈՐԳՈՒԶՅՈՏԻ ՏՊԱՐԱՆ
Պատվեր № 30
Գլավլիտ 128
Տիրաժ 1000 Տպագրել 1½

ՀՀ Ազգային գրադարան
NL0204396

363

ИНСТРУКЦИЯ

Специальному инструктору районного финансового отдела по организации и руководству работой ревизионных комиссий сельских советов